ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

10-ը հունիսի 2011թ.

Քաջաան

# *ՕՐԱԿԱՐԳ*

*2011Թ. ՀՈՒՆԻՍԻ 10-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ*

## 1. ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՊԼԱՆԱՅԻՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Մ.Հարությունյան - ՀՀ Նախագահի խորհրդական, գլխավոր ռազմական տեսուչ, գեներալ-գնդապետ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

## ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**10.06.2011թ.** **ք.Իջևան**

Նիստը վարում էր ՀՀ Տավուշի մարզպետ Ա.Ղուլարյանը.

Մարզխորհրդի 63 անդամներից ներկա էին 58-ը:

Նիստին ներկա էին ՀՀ Նախագահի խորհրդական, գլխավոր ռազմական տեսուչ, գեներալ-գնդապետ Միքայել Հարությունյանը, ՀՀ Տավուշի մարզի դատախազը, ՀՀ Ոստիկանության Տավուշի մարզային վարչության պետը, ՀՀ ԱԱԾ Տավուշի մարզային վարչության պետը, ՀՀ ՌՈ Լոռվա կայազորի Իջևանի բաժնի պետը, Իջևանի, Դիլիջանի, Բերդի և Նոյեմբերյանի զինկոմները և նրանց տեղակալները, Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ս.Հակոբյանը, Հրազդանի զինվորական կոմիսար Ս.Գրիգորյանը, ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալները, մարզպետարանի աշխատակազմի ղեկավարը,մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետեր, բաժինների վարիչներ և այլ պատասխանատուներ:

### 1. ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՊԼԱՆԱՅԻՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

---

/Զեկ.՝ Մ.Հարությունյան - ՀՀ Նախագահի խորհրդական, գլխավոր ռազմական տեսուչ, գեներալ-գնդապետ/

Զեկուցողը նշեց, որ 2011թ. մայիսի 12-ին ՀՀ Գլխավոր ռազմական տեսչության կողմից անցկացված ուսումնավարժական հավաքի ժամանակ 3-րդ բանակային կորպուսի կազմում մարզի տարածքում տեղակայված զորամասերը համալրելու նպատակով ահազանգով բարձրացվել են տարածքային զինկոմիսարիատները:

Համալրվել են թիվ 51191, 51036, 21127, 17193, 27229, զորամասերը՝ մարդկային ռեսուրսներով և տեխնիկայով:

Համաձայն գործող կարգի զինկոմիսարիատների կողմից համայնքներում իրականացված համադրման ընթացքում վերջնական ճշտումներ են կատարվել, ամրագրվել ռեսուրսները::

Զորամասերի համալրումը կատարվել է 100%-ով, սակայն այն իրականացվել է ժամանակի ձգձգումով, երբեմն 1-ին կարգի փոխարեն 2-րդ կարգի զինապարտներով:

Զորահավաքի ընթացքում մասնակցել են ըստ տարածաշրջանների՝

**<u>Իջևանի ՏԶԿ-ից</u>**

Կազմակերպված, սահմանված ժամկետում առաջադրանքը կատարել են Իջևան, Ազատամուտ, Աղավնավանք համայնքները, համեմատաբար պասիվ մասնակցություն են ունեցել Սևքար, Աչաջուր, Գանձաքար համայնքները:

**<u>Դիլիջանի ՏԶԿ-ից</u>**

Բոլոր համայնքները ակտիվ մասնակցել և առաջադրանքը կատարել են 100%-ով, որի համար Դիլիջանի քաղաքապետին և զինկոմին իր խորին շնորհակալությունը հայտնեց գեներալ-գնդապետ Մ.Հարությունյանը:

**Բերդի ՏԶԿ-ից**

Կազմակերպչական և ակտիվ մասնակցության առումով իրենց լավագույն կազմերով են դրսևորել Չինարի, Չորաթան, Արծվաբերդ, Նորաշեն, Իծաքար, Նավուր, Ն.Կ.Աղբյուր համայնքները, զինկոմիսարիատի հետ փոխհամագործակցելու և կցագրված անձնակազմի ու տեխնիկայի անհրաժեշտ քանակով ներկայացնելու աշխատանքներում, վատ է դրսևորել հատկապես Վ. Կ. Աղբյուր համայնքը:

**Նոյեմբերյանի ՏԶԿ-ից**

Իրենց ակտիվ մասնակցությամբ աչքի են ընկել Նոյեմբերյան, Բերդավան, Զորական, Այրում, Պտղավան, Դովեղ, Ջուջևան, Ոսկեվան համայնքները, հնարավորություններից ցածր մասնակցություն են ունեցել Կողբ, Բաղանիս, Կոթի, Հաղթանակ համայնքները:

Հաշվի առնելով զորավարժանքի ընթացքում սահմանված ժ+24 առաջադրանքի կատարման մեջ նկատված թերությունները, գլխավոր ռազմական տեսչությունը այն գնահատեց "բավարար" և հույս հայտնեց, որ նկատված թերություններն ու անճշտությունները վերացնելու դեպքում մարզը պատրաստ կլինի իր առջև դրված առաջադրանքը կատարելու սահմանված ժամկետում:

Զորահավաքի առաջադրանքների կատարմանը մարզպետարանի պատասխանատու աշխատակիցների հետ ակտիվորեն մասնակցել և իրենց աջակցությունն են ցուցաբերել Ոստիկանության Տավուշի մարզային վարչության և տարածքային բաժինների աշխատակիցները:

Զորահավաքի ընթացքում ի հայտ են եկել որոշ խնդիրներ, որոնք բացասական ազդեցություն են ունեցել առաջադրանքը հստակ կատարելու վրա՝

- Զորահավաքային առաջադրանքի կատարման վրա իր բացասական ազդեցությունն է ունենում այս ամիսներին արտագնա աշխատանքի մեկնողների մեծ թվաքանակը, ինչպես նաև սարամասեր և հեռագնա արոտներ մեկնող անասնատերերի թիվը,
- Բերդի զինկոմիսարիատը 2011 թվականի ընթացքում 3-րդ անգամ համալրում էր թիվ 51036 զորամասը, որը պատճառ դարձավ որոշ զինապարտների հրաժարման,
- Զորամասերի ընդունման կետերի թողունակությունը ցածր էր, եթե հաշվի առնենք նաև հաշվառման քարտերի հետ աշխատող կադրերի ոչ պրոֆեսիոնալ մոտեցումը,
- Տեխնիկայի համալրման գործընթացում դժվարություն է առաջանում անհրաժեշտ քարշակների բացակայության պատճառով, դրանք փոխարինվում են այլ մակնիշի մեքենաներով, որոնք հարմար չեն լինում ԿՍ-19 հրանոթների տեղափոխման համար,
- Վառելիքալիցքավորող մեքենաների բացակայության պատճառով դրանք փոխարինվում են սովորական բենզատորներով և կողավոր մեքենաներով,
- Հաշվառված տեխնիկան հիմնականում ֆիզիկապես մաշված, տերերի կողմից չշահագործվող կամ անսարք է:

Հետագայում զորահավաքային առաջադրանքները պատշաճ կատարելու նպատակով՝

**Առաջարկվեց.**

**Համայնքների ղեկավարներին.**

- Մանրակրկիտ ուսումնասիրել "Զինապարտության մասին" ՀՀ օրենքը և դրանից բխող ՀՀ կառավարության համապատասխան միջոցառումները, հետևողականություն ցուցաբերել զորահավաքային նախապատրաստության պլանների կազմման աշխատանքների

նկատմամբ, հաշվի առնել ցանկացած մանրուք համարվող հանգամանքը և միջոցներ ձեռնարկել թերությունների վերացման ուղղությամբ:

- Կրկին անգամ ստուգել զինապարտների գրանցամատյանների տվյալները, դրանք համեմատել համապատասխան զինկոմիսարիատների տվյալների հետ և բերել ավարտուն տեսքի:
- Լուրջ ուշադրություն դարձնել բանակի համալրման խնդրին և այն դասել որպես թիվ 1 պարտականության դասին:
- Հաշվի առնելով տարածքում առկա միջոցների տեխնիկական վիճակը ՀՀ ՊՆ համակարգի տեխնիկական միջոցների դուրս գրվող ավտոպահեստամասերը հնարավորության սահմաններում տրամադրել կցագրված տեխնիկայի տերերին:
- կցագրումը իրականացնել ոչ թե անվանական, այլ ըստ պահանջվող զինահաշվառման մասնագիտությունների քանակի (բացառությամբ դեֆիցիտ մասնագիտությունների),
- Կցագրման որակը բարձրացնելու և պահեստազորում ռազմական ուսուցման ռեսուրսների կուտակման նպատակով հերթական զորակոչի ժամանակ հաշվի առնել ըստ ՋՀՄ-ի ներկայացվող պահանջարկը և հնարավորության սահմաններում զորակոչել համապատասխան զորամասեր:
- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ռազմական ամբիոնները փակվելուց հետո պահեստազորում հաշվառվող սպաների թիվը նվազել է, առաջարկում ենք իսկական զինվորական ծառայությունից զորացրվող սերժանտներին և ավագներին շնորհել սպայական կոչումներ՝ որոշ վերապատրաստում անցնելուց հետո:
- Անհրաժեշտություն կա համապատասխան օրենսդրական ակտերով հստակեցնելու զորահավաքային միջոցառումների նախապատրաստման և անցկացման աշխատանքներում տեղական ինքնակառավարման մարմինների և հիմնարկ-ձեռնարկությունների պարտականությունների և պատասխանատվության հստակեցումը:

Ելույթ ունեցողները իրենց պատրաստակամությունը հայտնեցին արծարծված խնդիրներին լուրջ ուշադրություն դարձնելու, նկատված թերությունները վերացնելու և առաջիկայում ձեռնարկվելիք միջոցառումներին պատրաստ լինելու հարցում:

Միաժամանակ Ն.Կ.Աղբյուրի գյուղապետը խնդրեց, որ Այգեպար-Ն.Կ.Աղբյուր ճանապարհի վտանգավոր գոտում լինելու պատճառով այլընտրանքային ճանապարհի կառուցման հարց բարձրացվի:

Նկատի ունենալով, որ տարածաշրջանի բոլոր զինկոմիսարիատներում նոր զինկոմներ ու անձնակազմ է ձևավորվել, զեկուցողը հույս հայտնեց, որ նկատված թերությունները կշտկվեն և առաջիկա միջոցառումները կիրականացվեն սահմանված պահանջներին համապատասխան:

Մարզպետ Ա.Ղուլարյանը շնորհակալություն հայտնեց գեներալ-գնդապետ Մ.Հարությունյանին՝ թերությունները վերհանելու և դրանց վերացման ուղղությամբ համապատասխան մասնագիտական ցուցումներ տալու համար և հույս հայտնեց, որ մարզ կգործուղվի զորահավաքային գործին քաջատեղյակ մասնագետ, որի օգնությամբ կարճ ժամանակում կվերացվեն թերությունները:

ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ